ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԺԻՐԱՅՐԻ

ՄԵԴԻԱԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելանյա Գրիգորի Աստվածատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լուսինե Հրանտի Ֆլջյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Աղվանի Ոսկանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. ապրիլի 15-ին, ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. մարտի 4-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մ.գ.թ., դոցենտ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը

Զանգվածային հաղորդակցության միջոցների զարգացման, ժամանակակից տեղեկատվական անսպառ հոսքի պայմաններում հասարակության բոլոր կառույցներին զուգընթաց անխուսափելի է նաև կրթական համակարգի համաշխարհայնացումն ու տեղեկատվայնացումը: Հասարակության և յուրաքանչյուր անհատի կյանքում տեղեկատվական-հաղորդակցական միջոցների դերի աննախադեպ աճը, անձնական և մասնագիտական ոլորտներում առցանց շփումների ակտիվացումն առաջնահերթ են դարձնում գրագիտության ձեռքբերման նոր ձևերի, այդ թվում՝ մեդիա և տեղեկատվական, համակարգչային և համացանցային գրագիտության տիրապետման անհրաժեշտությունը: Գրագիտության այս նոր ձևերի առանցքում մեդիակրթության հիմքը կազմող՝ անձի տարաբնույթ և բազմաշերտ կոմպետենցիաների համակարգն է:

Մեդիակրթությունը մանկավարժության յուրահատուկ բնագավառ է, որը կոչված է ձևավորելու մեդիակոմպետենտ անձ: Մեդիակոմպետենցիան արդի տեղեկատվական դարաշրջանում անհատի լիարժեք կենսագործունեության, անհրաժեշտ տեղեկույթ ձեռք բերելու, այն գնահատելու և օգտագործելու, ինքնակրթությամբ ու շարունակական կրթությամբ զբաղվելու, ինչպես նաև մեդիայի բացասական ազդեցությունից պաշտպանվելու կարողությունն է:

Կրթական համակարգում արդյունավետ մեդիատեխնոլոգիաների ստեղծման և կիրառման, մեդիամշակույթի ձևավորման ուղղությամբ ՀՀ-ում կատարվել են որոշ հետազոտություններ՝ իբրև ուսումնասիրության առարկա դարձնելով կրթական համակարգի տեղեկատվայնացումը, շարունակական կրթության ապահովումը և կրթության բովանդակության արդիականացումը: Ուսումնասիրությունների ընթացքում մասնավորապես կարևորել ենք ՀՀ-ում իրականացված հետազոտությունները (Աստվածատրյան Մ. Գ., Թերզյան Գ.Հ. և այլք, 2004, Աստվածատրյան Մ.Գ. Ավագյան Մ.Հ., Թերզյան Գ.Հ., 2015, Բայադյան Հ., 2005), «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը), ինչպես նաև արտասահմանյան մի շարք հեղինակների աշխատությունները (Баранов О. А., 2002, Лау Х., 2006, Сметанина С.И., 2002, Сысоев П. В., Евстигнеев М. Н., 2010, Федоров А. В., 2015, Челышева И. В., 2009, Чичерина Н. В., 2008, Alderson J. Ch., 2000, Andersen B. B., 2013, Bravender P., 2015, Buckingham D., 2003, Coiro J., 2008, Joosten T., 2012, Serafini F., 2010, Trebor R. Scholz, 2010), ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մեդիակրթության ոլորտին առնչվող հիմնարար փաստաթղթերը,

ուղեցույցներն ու ձեռնարկները, Լեզուների իմացության համաեվրոպական համակարգը (CEFR, 2001):

Նշված աշխատություններում ոչ միայն տեսականորեն լիարժեք և համապարփակ սահմանվում են մեդիակրթության և մեդիագրագիտության էությունն ու խնդիրները, այլ նաև առաջարկվում է ուսումնական գործընթացում մեդիակոմպետենցիայի ձևավորման գործիքակազմը: Համոզված ենք, որ վերոհիշյալ աշխատությունները կարևոր աղբյուր կարող են դառնալ արտասահմանյան փորձը համադրելու և մեդիատեքստերի ու մեդիակոմ-պետենցիայի ձևավորման առումով տեղեկությունների համար:

Անառարկելի է, որ ավանդական ուսուցումը պատշաճ չի ապահովում սովորողների լիարժեք մեդիակրթությունն ու ինքնուսուցումը, ինչն այսօրվա հրամայականն է: Այդ իսկ պատճառով զանգվածային հաղորդակցության պայմաններում հակասություններ են ծագում.

- հասարակության զարգացման ժամանակակից պահանջների և նոր սերնդի կրթության առկա վիճակի միջև,
- աշխատաշուկայում մեդիակոմպետենտ մասնագետների կենսական պահանջի և գործող ավանդական մոտեցումների միջև,
- ժամանակակից կրթական չափորոշիչների պահանջների և գործող կրթահամակարգի միջև:

Ուստի, կարևորելով թեմայի արդիականությունը՝ փորձ է արվել բացահայտելու իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում ուսանողների մեդիակոմպետենցիայի տիրապետման առկա դժվարությունները և մշակելու նրա ձևավորմանն ուղղված ռազմավարություններ: Հետազոտության իրականացման համար հիմք է ընդունվել ընթերցանությունը՝ որպես ընկալողական (ռեցեպտիվ) խոսքային գործունեության տեսակ, քանի որ այն ոչ միայն ուսուցման նպատակ է, այլ նաև ուսուցման և տեղեկությունների հայթայթման միջոց, քանզի ապագա մասնագետներն իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը տարբեր աղբյուրներից ձեռք են բերում գերազանցապես ընթերցանության միջոցով:

Այսպիսով, մեր հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթության արդի մարտահրավերներով, որոնք ի հայտ են եկել համաշխարհայնացման, հասարակության տեղեկատվայնացման և մեդիատեղեկատվության աճող հոսքերի արդյունքում: Հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորված է նաև ՀՀ-ում մեր ուսումնասիրած թեմային առնչվող հիմնարար հետազոտությունների բացակայությամբ:

Հետազոտության նպատակն է

Բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավագիտական ֆակուլտետների ուսանողների մեդիակոմպտենցիայի ձևավորմանը և անգլերենով ընթերցանության կարողութունների զարգացմանը միտված մեթոդիկայի մշակումը:

Հետազոտության օբյեկտը

Բարձրագույն ուսումնական հաստատություններում մեդիակրթության զարգացման գործընթացն է:

Հետազոտության առարկան

Իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացումն ապահովող մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածը

ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում անգլերենի ոչ մասնագիտական դասընթացում ընթերցանության ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ կլինի, եթե՝

- կարդալու կարողության ձևավորման ռազմավարությունների մշակման հիմքում դրվեն կրթական համակարգի տեղեկատվայնացման և մեդիականացման սկզբունքներն ու տեխնոլոգիաները,
- հայտորոշվի սովորողների լեզվական իրազեկության մակարդակը՝ հիմք ընդունելով Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի (CEFR) չափորոշիչները,
- ճշգրտվեն ընթերցանության տարբեր տեսակների նպատակները և մշակվեն որոնողական (selective reading) և ընդհանուր բովանդակության ընկալման (reading for information/gist) ընթերցանության կարողությունների զարգացմանն ուղղված ռազմավարությունները,
- ձևավորվի մասնագիտական տեքստերի բովանդակությունն ըմբռնելու սովորողների հմտությունը՝ մեդիատեխնոլոգիաների ճիշտ կիրառմամբ, ինչն իր հերթին նշանակալիորեն կխթանի ընթերցանության դրդապատճառների առաջացումը,
- ընթերցանության դասընթացում իրականացվի մեդիակոմպետենցիայի ձևավորմանն ուղղված գիտականորեն հիմնավորված և փորձարկված մեթոդական համակարգ:

Հիմք ընդունելով ուսումնասիրության օբյեկտը, առարկան, վարկածը և նպատակը՝ սահմանվում են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում մուլտիմեդիական տեխնոլոգիաների կիրառման առկա վիճակը, բուհերի նյութատեխնիկական հագեցվածության աստիճանը,
- հայտորոշել ուսանողների՝ մեդիակոմպետենցիայի տիրապետման մակարդակը,
- բացահայտել ուսանողների լեզվական իրազեկության մակարդակը՝ հիմնվելով Լեզուների իմացության համաեվրոպական համակարգի չափորոշիչների վրա,

- սահմանել իրավագիտական անգլերենի ընթերցանության դասընթացում ուսանողների մեդիակոմպետենցիայի տիրապետման դժվարությունները,
- մշակել ուսանողների ընթերցանության կարողությունների զարգացման նպատակով մեդիակոմպետենցիայի ձևավորմանն ուղղված ռազմավարություններ,
- փորձարկել մշակված մեթոդական համակարգը ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետում և որոշել արդյունավետության աստիճանն ու թերի կողմերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել.

- ուսումնական գործընթացի տեղեկատվայնացմանն ու մեդիականացմանը նվիրված աշխատությունները (Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ. և այլք, 2004, Մանուկյան Ա.Մ., Մուրադյան Հ.Ս., 2017, Добросклонская Т. Г., 2008, Сысоев П. В., Евстигнеев М.Н., 2010, Кулешова А. Ю., 2013, Лау Х., 2010, Роберт И. В., 2014, Федоров А. В., 2001, Grizzle A., 2013, Wilson C., 2011),
- ընթերցանության ուսուցման հիմնադրույթները (Աստվածատրյան Մ.Գ., 1985, Берман И. М., 1970, Фоломкина С. К., 2005, Alderson J. Ch., 2000, Carrel L. P., 1988, Ellis R., 2008),
- հումանիստական, անձնակենտրոն մոտեցման հիմնարար դրույթները (Մանկավարժական կրթության...., 2015, Выготский Л.С., 1996, Леонтьев А.Н., Jones L., 2007, Hannafin M. J., 2010, Weimer M., 2013, Williams K. C., 2009),
- կարողունակության զարգացման մոտեցումը (Մանկավարժական կրթության...., 2015, Бим И.Л., 2007, Гальскова Н.Д., 2003, Зимняя И. А., 2004, Кузьминов Я. И., 2007, Сафонова В.В., 2006, Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment (CEFR), 2001, Companion Volume With New Descriptors, 2018,
- գործունեական մոտեցումը (Губанова М. И., 2013, Кузнецов Ю. Ф., 2006, Леонтьев А.А., 2008):

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով

- Առաջին փուլում՝ (2015-2017թթ.) ուսումնասիրվել և վերլուծության է ենթարկվել թեմային առնչվող գիտական և ուսումնամեթոդական գրականությունը, հստակեցվել են հետազոտության հիմնական հասկացությունները, կազմվել է հետազոտության իրականացման պլան, բացահայտվել է հիմնահարցի մշակվածության աստիճանը գիտական գրականության մեջ, հիմնավորվել է հետազոտության արդիականությունը:
- Երկրորդ փուլում (2017-2018թթ.) առաջադրվել է հետազոտության վարկածը, անցկացվել է հայտորոշիչ թեստավորում, կատարվել է

արդյունքների վերլուծություն, վերջնականապես ճշտվել է հետազոտության խնդիրը:

- Երրորդ փուլում (2018-2020թթ.) ատենախոսության հիմնախնդրի շուրջ մշակվել են ռազմավարություններ և վարժությունների համակարգ, իրականացվել է առաջադրված վարկածի փորձարարական ստուգում (ուսուցում, կարողությունների ձևավորում, գնահատում), ամփոփվել են ստացված արդյունքերը, կատարվել է աշխատանքի վերջնական խմբագրում:

Հետազոտության գիտական նորույթը

- Ստեղծվել է բարձրագույն ուսումնական հաստատություններում իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում մեդիակոմ-պետենցիայի ձևավորման միջոցով ընթերցանության կարողությունների զարգացման տեսականորեն հիմնավորված և գործնականում փորձարկված մեթոդական համակարգ:
- Մշակվել են ընթերցանության դասընթացում մեդիատեխնոլոգիաների արդյունավետ կիրառման ռազմավարություններ:
- Ստեղծվել են մեդիատեխնոլոգիաների հիման վրա ընթերցանության ուսուցման վարժությունների համակարգ և ռազմավարություններ:
- Մշակվել և փորձարկվել է օտար լեզվի դասընթացում սովորողների մեդիակոմպետենցիայի հայտորոշիչ թեստ՝ հիմնված մեդիակոմպետենցիայի միջազգայնորեն ընդունված չափորոշիչների վրա՝ հաշվի առնելով ազգային լսարանի առանձնահատկությունները:

Հետազոտության տեսական նշանակությունը

- Ստացված տվյալները կարող են ընդլայնել բարձրագույն ուսումնական հաստատություններում ընթերցանության ուսուցման մեթոդական համակարգը՝ հիմնվելով մեդիակոմպետենցիայի ձևավորման արդի տեխնոլոգիաների կիրառման վրա:
- Ընդհանրացվել են ընթերցանության ուսուցման ընթացքում մուլտիմեդիական միջոցների օգտագործման՝ գոյություն ունեցող տեսական և մեթոդաբանական մոտեցումները:
- Մշակվել է իրավագիտական ֆակուլտետի ուսանողների մեդիակոմպե-տենցիայի ձևավորմանը և անգլերեն մասնագիտական տեքստերի ընթերցանության կարողությունների զարգացմանը միտված մեթոդա-կան համակարգ:
- Ստեղծվել է անգլերենի ընթերցանության դասընթացի համար նոր մեթոդական ուղղվածության թեստային համակարգ:

Հետազոտության գործնական նշանակությունը.

Ստացված արդյունքները կարող են կիրառվել՝

- լեզվակրթության գործընթացում միջառարկայական կապերի ուժեղաց-ման նպատակով,

- բուհերի՝ իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացներում,
- բուհերի ոչ մասնագիտական անգլերենի այլ դասընթացներում՝ տվյալ ոլորտին համապատասխանեցնելով մշակված վարժությունների համակարգը,
- նոր ուսումնական ձեռնարկների, ուղեցույցների, մեթոդական համակարգերի ստեղծման ընթացքում,
- ուսուցիչների մասնագիտական կատարելագործման և վերապատրաստման դասընթացներում:

Հետազոտության մեթոդները

Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետևյալ մեթոդները.

Տեսական.

- թեմային առնչվող գիտական և ուսումնամեթոդական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն

Էմպիրիկ.

- սոցիոլոգիական հարցում
- հայտորոշիչ թեստավորում
- մանկավարժական մշտադիտարկում, անկետավորում
- փորձարարական ուսուցում

Վիճակագրական.

- մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Պաշտպանության ներկայացվող դրույթներ

1. Կրթական համակարգի տեղեկատվայնացման պայմաններում օտար լեզվի դասընթացի արդյունավետության նախապայմանն ու երաշխիքը ուսումնական գործընթացում ժամանակակից մեդիատեխնոլոգիաների դիդակտիկական ներուժի բացահայտումն ու կիրառումն է:
2. Ուսանողների կողմից մեդիագրագիտության տիրապետումը նպաստում է մեդիատեքստերը ճիշտ որոնելու, ընտրելու, հասկանալու և գնահատելու կարողությունների ձևավորմանը:
3. Մեդիակոմպետենցիայի ձևավորումը կարող է մեծապես բարձրացնել անգլերեն լեզվով ընթերցանության ուսուցման արդյունավետությունը՝ շնորհիվ մեդիատեխնոլոգիաների լայն հնարավորությունների:
4. Ընթերցանության կարողությունների զարգացումը և մեդիակոմպետենցիայի ձևավորումն իրականացվում են զուգահեռ՝ ապահովելով լեզվական և մեդիակոմպետենցիաների ինտեգրումը հատուկ մշակված մեթոդական համակարգի ու ռազմավարությունների միջոցով:

5. Մեդիակոմպետենցիայի ձևավորումը խթանում է սովորողների ինքնավարությունը և նպաստում է շարունակական լեզվակրթությանն ու ինքնակրթությանը:
6. Մշակված մեթոդական համակարգի ռազմավարությունը, թեստային առաջադրանքներն ուսանողներին օգնում են կողմնորոշվել տեղեկատվական դաշտում, ճիշտ որոնել, ընտրել և գրագետ օգտագործել մեդիատեքստերը, ինչպես նաև ակտիվորեն ներգրավվել ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովվում են ատենախոսության թեմային առնչվող գիտական, ուսումնամեթոդական, մասնագիտական գրականության ուսումնասիրությամբ, հետազոտության գիտական մեթոդաբանությամբ, մեր երկրում և արտասահմանում կատարված հետազոտությունների և լավագույն փորձի համադրմամբ, հայտորոշիչ թեստավորման և փորձարարական ուսուցման ընթացքում արդյունքների ճշգրտության համար համապատասխան պայմանների ստեղծմամբ, կիրառված թեստերի հուսալիությամբ, ամփոփիչ թեստավորման արդյունքներով, վիճակագրական տվյալների հստակեցմամբ և ստացած արդյունքների ընդհանրացմամբ:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից և հավելվածից: Այն ներառում է 12 աղյուսակ, 41 տրամագիր, 5 գծապատկեր, 17 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 133 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան ու խնդիրները, առաջադրված է գիտական վարկածը, հստակեցված են ատենախոսության գիտական նորույթը և պաշտանության ներկայացվող հիմնադրույթները, պարզաբանված է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Լեզվակրթության քաղաքականության ժամանակակից միտումները»** վերտառությամբ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Մուլտիմեդիական տեխնոլոգիաների օգտագործման առկա վիճակը իրավագիտական կողմնորոշմամբ դասընթացներում», փորձ է արվել բացահայտելու կրթության տեղեկատվայնացման ժամանակակից պայմաններում մուլտիմեդիական տեխնոլոգիաների կիրառման առկա վիճակը իրավագիտական կողմնորոշման

ԱՌՈՒՆՔ:

**Բեռնատարների և դրոնների միջև մրցակցություն «Տեղափոխումներ-դրոնիկոնտրոլ» հասարակական կազմակերպությունը, «Ամենաարագ դրոնը» մրցույթ է հայտարարել Հանրապետության տարածքում գործող բեռնատարների և դրոնների միջև մրցակցությունը դրական է գնահատվել մասնակիցների կողմից: Բեռնատարները ցույց տվեցին, որ դեռևս ունակ են մրցել դրոնների հետ, թեև տեղի ունեցավ կրկնակի դիպուկահարություն, երբ դրոնը հասավ նպատակակետ, բայց դրանից հետո հարվածեց նաև բեռնատարը: Դրոնները հարվածեցին նաև բեռնատարին, որը հասավ նպատակակետ: Մրցույթի ընթացքում դրոնները ոչնչացրեցին 12 բեռնատարի հետևի մասը, իսկ բեռնատարները 7 դրոն: Մրցույթի հաղթող ճանաչվեցին «Ինֆոտրանս» ՍՊԸ-ի դրոնները, որոնք ոչնչացրեցին 9 բեռնատարի հետևի մասը

Չորրորդ ենթագլխում՝ «Տեղեկատվական և համակարգչային գրագիտություն», քննարկվում է տեղեկատվական և համակարգչային գրագիտության կարևորությունը: Սահմանվում է, որ տեղեկատվական գրագիտությունը տեղեկատվության սեփական պահանջմունքը հասկանալու, այն ձեռք բերելու, գնահատելու և արդյունավետորեն կիրառելու անձի ունակությունն է: 21-րդ դարում անհատի համար տեղեկատվական և համակարգչային գրագիտությունը կենսական նշանակություն ունի հասարակության մեջ անձնային ճիշտ կողմնորոշիչներ ձևավորելու և լիարժեք կենսագործունեություն ապահովելու համար: Բացի այդ, գրագիտության այս տեսակների տիրապետումը շարունակական կրթության և մասնագիտական կատարելագործման անկյունաքարն է: Միայն տեղեկատվական աղբյուրներից օգտվելու կարողությամբ օժտված անհատը այսօրվա հարափոփոխ աշխարհում կարող է զբաղվել սեփական կրթական և մասնագիտական որակավորման մակարդակի ինքնուրույն կատարելագործմամբ՝ օգտագործելով հեռահաղորդակցական տեխնոլոգիաների անսպառ հնարավորությունները:

Ատենախոսության՝ **«Ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորման դժվարությունները իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում»** խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Մեդիատեքստերի էության բացահայտման ժամանակակից մոտեցումներ», սահմանվում է «մեդիատեքստ» եզրույթը, բացահայտվում է մեդիատեքստերի էությունը, նախանշվում են այն առանձնահատկությունները, որոնցով մեդիատեքստը տարբերվում է ավանդական տպագիր տեքստից: Մեդիատեքստի կարևորագույն բնութագրիչներն են միջնորդավորվածությունը, կոդավորվածությունը, զանգվածայնությունը և հիպերտեքստայնությունը: Մեդիատեքստը անսահմանափակ թվով հիպերտեքստերի մի համակարգ է, որի յուրաքանչյուր բաղադրիչ կարող է լինել մյուսի հղումը: Առանձին տեքստերի միջև կապն իրականանում է մեկ ամբողջական տեղեկատվական միջավայրում, որը թույլ է տալիս տեքստը ընթերցել ոչ միայն հորիզոնական (ինչպես տպագիր էջի դեպքում է), այլ նաև դիտարկել ոչ գծային ձևով՝ միմյանց հետ կապված հղումների միջոցով խորանալով տեղեկատվության մեջ: Մեդիատեքստը կարող է պարունակել ոչ միայն տեքստային, այլ նաև գրաֆիկական, անիմացիոն, ձայնային և տեսաձայնային տեղեկատվության հղումներ: Մեդիատեքստերի վերոնշյալ հատկանիշներով է պայմանավորված նրանց ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «Ուսանողների մեդիակոմպետենցիայի հայտորոշիչ թեստավորում», ամփոփված են ուսանողների մեդիակոմպետենցիայի հայտորոշիչ թեստավորման արդյունքները, ինչպես նաև թեստավորման իրականացման ընթացակարգը, պայմանները, ժամկետները, հայտորոշիչ թեստի առաջադրանքները և ստուգման չափորոշիչները:

Հայտորոշիչ թեստավորումն իրականացվել է երկու փուլով: Թեստավորման առաջին փուլի առաջադրանքների միջոցով որոշվել է սովորողների մեդիակոմպետենցիայի տիրապետման շեմային մակարդակը: Թեստավորման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ սովորողները չեն տիրապետում մեդիակոմպետենցիայի բավարար մակարդակի՝ համացանցում արդյունավետ կերպով իրականացնելու մեդիառեսուրսի որոնում և գնահատում *(տե՛ս աղյուսակ 1)*:

Թեստավորման երկրորդ փուլի առաջադրանքների նպատակն էր բացահայտել ուսանողների՝ իրավագիտական անգլերեն մեդիատեքստերի ընկալման կարողությունների ձևավորվածության մակարդակը: Թեստավորման արդյունքները ցույց տվեցին, որ ուսանողները թեև հասկանում են իրավագիտական մեդիատեքստի առանձին նախադասությունների իմաստը, սակայն դժվարանում են ընկալել տեքստի առանձին հատվածների և ամբողջական բովանդակությունը: Թեստավորման արդյունքնում պարզ դարձավ, որ համացանցի առկայությունը հիմնականում չի նպաստել օտարալեզու տեքստի բովանդակության ըմբռնմանը *(տե՛ս աղյուսակ 2)*:

Հայտորոշիչ թեստավորման արդյունքները (Առաջին փուլ)

Աղյուսակ 1

Առաջադրանք	**Պատասխան**			
	ճիշտ	**սխալ**	**թերի**	**չկատարված**
1	2	27	6	65
2	38	15	47	0
3	5	11	0	84
4	0	19	0	81
5	3	24	4	69
6	24	18	2	56
7	13	0	10	77
8	11	0	35	54
Ընդ. պատ.	**96**	**114**	**104**	**476**
Ընդամենը՝	**800**			
Տոկոս.հարաբ.	**12%**	**14.2%**	**13%**	**59.5%**

Հայտորոշիչ թեստավորման արդյունքները (Երկրորդ փուլ)

Աղյուսակ 2

Առաջադրանք	**Պատասխան**			
	ճիշտ	**սխալ**	**թերի**	**չկատարված**
1	34	62	0	4
2	28	72	0	0
3	13	86	0	1

4	8	4	65	23
5	32	13	0	55
6	24	7	46	23
7	58	35	0	7
8	71	12	0	17
9	31	66	0	3
10	22	6	63	9
Ընդ. պատ.	**321**	**363**	**174**	**142**
Ընդամենը	**1000**			
Տոկոս.հարաբ.	**32.1%**	**36.3%**	**17.4%**	**14.2%**

Հայտորոշիչ թեստավորման միջոցով հնարավոր դարձավ հստակորեն բացահայտել խնդրո առարկայի էությունը և ըստ այդմ՝ մշակել ռազմավարություններ, որոնք կնպաստեն իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացի միջոցով ուսանողների մեդիակոմպետենտության բարձր մակարդակի ձևավորմանը՝ զուգահեռաբար խթանելով նրանց ընթերցողական կարողությունների զարգացմանն ու լեզվական իրազեկության մակարդակի աճին:

Ատենախոսության երրորդ՝ **«Մեդիակոմպետենցիայի ձևավորման մեթոդական համակարգի մշակում»** վերտառությամբ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ընթերցանության ուսուցման մոդելի հիմքում ընկած սկզբունքները», ներկայացված են մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերեն մեդիատեքստերի ընթերցանության ուսուցման մոդելի հիմքում ընկած հետևյալ սկզբունքները՝ անձնակենտրոն մոտեցում, կոմպետենտային մոտեցում, գործունեական մոտեցում, ուսումնական գործընթացի տեղեկատվայնացում, ուսումնական գործընթացի մեդիականացում:

Երկրորդ ենթագլխում՝ «Մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերենի ընթերցանության ուսուցման մոդելի մշակման մեթոդաբանական հիմքերը», զուգադրական վերլուծության են ենթակվել ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները ավանդական կրթության և մեդիակրթության համատեքստում: Քանի որ մեր խնդիրը մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ իրավագիտական կողմնորոշմամբ անգլերենով ընթերցանության ուսուցումն է, ապա բացի բուն ընթերցողական կարողությունների զարգացումից, անհրաժեշտ է նաև ձևավորել մուլտիմեդիական միջոցները ճիշտ և արդյունավետ օգտագործելու ուսանողների կոմպետենցիան: Ուստի, հաշվի առնելով ուսանողների մեդիակոմպետենցիայի հայտորոշիչ թեստավորման արդյունքում ի հայտ եկած դժվարությունները և

համադրելով արտասահմանյան փորձը՝ տեսականորեն մշակվել է մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացման հետևյալ մոդելը *(տե՛ս գծապատկեր 1):*

Մուլտիմեդիական միջոցների կիրառմամբ անգլերեն մեդիատեքստերի ընթերցանության մոդելի հիման վրա մենք մշակել ենք ռազմավարություն՝ ուղղված

ա) ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորմանը,

բ) ուսանողների ընթերցողական կարողությունների զարգացմանը:

Ռազմավարությունների մշակման ընթացքում շեշտը դրվել է որոնողական ընթերցանության (selective reading) և ընդհանուր բովանդակության ըմբռնման նպատակով ընթերցանության (reading for information/gist) կարողությունների զարգացման վրա, քանի որ համացանցում տեղադրված հազարավոր տեքստերից անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման համար առավել կարևոր են վերոնշյալ տեսակները:

Գծապատկեր 1



Երրորդ ենթագլխում՝ «Ռազմավարություններ՝ ուղղված մեդիատեքստերի ընթերցանության կարողությունների զարգացմանը», ներկայացված են ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորման միջոցով իրավագիտական ուղղվածության անգլերեն մեդիատեքստերի ընթերցանության կարողության զարգացմանը միտված ռազմավարությունը և վարժությունների համակարգը: Նշված վերջնարդյունքին հասնելու նպատակով մշակվել են հետևյալ ռազմավարական քայլերը.

Քայլ 1. Փորձարարական ուսուցման խմբերի ձևավորում, նյութատեխնիկական բազայի ապահովում:

Քայլ 2. Հայտորոշիչ թեստավորման արդյունքում ի հայտ եկած դժվարությունների հիման վրա մեդիակոմպետենցիայի ձևավորման ներածական դասընթացի մշակում, հիմնական գրականության, հղումների և տարաբնույթ նյութերի ցանկի (hotlist, subject sampler) պատրաստում: Ներածական դասընթացի անցկացում ուսումնական խմբերում: Ներածական դասընթացն իրականացվել է երկու փուլով.

- մեդիատեքստերի որոնման և ընտրության կարողության ձևավորում,
- մեդիառեսուրսների բովանդակության ընկալման և գնահատման կարողության ձևավորում:

Քայլ 3. «Օտար լեզու և մեդիակրթություն» ինտեգրված դասընթացի կազմակերպում՝ ուղղված մեդիակրթության համատեքստում լեզվական նյութի և տեքստի ընդհանուր բովանդակության ըմբռնման սովորողների կարողությունների ձևավորմանը: Այստեղ նույնպես առանձնացվել է երկու փուլ.

- լեզվական նյութի ընկալման կարողության ձևավորում մեդիակոմպետենցիայի զարգացման միջոցով,
- մեդիատեքստի ընդհանուր բովանդակության ըմբռնման կարողության ձևավորում:

Փորձարարական ուսուցումն իրականացվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտական ֆակուլտետի երրորդ կուրսում (100 ուսանող) 32 ժամ ընդհանուր ժամաքանակով:

Ուսանողների մեդիակոմպետենցիայի ձևավորման ներածական դասընթացը ներառում է տեխնիկական-լեզվական վարժությունների համակարգ, որի միջոցով զարգացվում են մեդիատեքստերի արդյունավետ որոնման և գնահատման կարողությունները:

«Օտար լեզու և մեդիակրթություն» ինտեգրված դասընթացը ներառում է ռեցեպտիվ լեզվական և տեքստի բովանդակության ըմբռնման վարժությունների համակարգ:

Չորրորդ ենթագլխում՝ «Մշակված մեթոդական համակարգի փորձարկում և արդյունքների վերլուծություն», նկարագրված են մշակված մեթոդական համակարգի ներդրմամբ փորձարարական ուսուցման արդյունքները:

Փորձարարական ուսուցման նպատակն էր ճշտել, թե ընտրված ռազմավարությունների ու վարժությունների համակարգը՝

ա) որքանով է դրական արդյունք տվել,

բ) որքանով են հաղթահարվել ուսանողների՝ մեդիակոմպետենցիայի տիրապետման դժվարությունները,

գ) որքանով է նպաստել մեդիատեքստերի ընթեցանության կարողությունների զարգացմանը:

Փորձարարական ուսուցման ավարտին անցկացվել է սովորողների թեստավորում և ամփոփվել են ստացված արդյունքները: Թեստերի արդյունք-

ների ստուգման և սխալների հաշվառման չափանիշները նույնն են, ինչ հայտորոշիչ թեստավորման ժամանակ:

Ստորև ներկայացված են փորձարարական թեստավորման առաջին և երկրորդ փուլերի արդյունքների ամփոփ աղյուսակները *(տե՛ս աղյուսակ 3, 4)*:

Փորձարարական թեստավորման արդյունքները (Առաջին փուլ)

Աղյուսակ 3

Առաջադրանք	**Պատասխան**			
	ճիշտ	**սխալ**	**թերի**	**չկատարված**
1	78	6	3	13
2	82	0	14	4
3	74	6	3	17
4	70	11	17	2
5	88	6	1	5
6	68	13	0	19
7	91	0	4	5
8	96	0	1	3
Ընդ. պատ.	**647**	**42**	**43**	**68**
Ընդամենը՝	**800**			
Տոկոս.հարաբ.	**80.8%**	**5.2%**	**5.3%**	**8.5**

Փորձարարական թեստավորման արդյունքները (Երկրորդ փուլ)

Աղյուսակ 4

Առաջադրանք	**Պատասխան**			
	ճիշտ	**սխալ**	**թերի**	**չկատարված**
1	83	7	0	10
2	89	5	0	6
3	54	29	0	17
4	62	3	26	9
5	73	9	0	18
6	81	2	11	6
7	77	19	0	6
8	93	3	0	4
9	64	35	0	1
10	52	3	38	7
Ընդ. պատ.	**728**	**115**	**75**	**82**
Ընդամենը	**1000**			
Տոկոս.հարաբ.	**72.8%**	**11.5%**	**7.5%**	**8.2%**

Փորձարարական թեստավորման արդյունքների վերլուծությամբ և համադրությամբ ակնհայտորեն տեսանելի է մեդիակոմպետենցիայի և ընթերցանության կարողությունների զարգացման դրական շարժընթաց: Փորձարարական ուսուցման արդյունքում ճիշտ պատասխանների թիվը կազմել է 1375՝ նախկին 417-ի համեմատությամբ, այսինքն՝ աճել է 3 անգամ: Ընդ որում, կարելի է փաստել, որ այս երկու կարողությունների զարգացումը տեղի է ունեցել զուգահեռաբար և դրանք փոխլրացրել են միմյանց:

Այսպիսով, թեստավորման արդյունքները վկայում են, որ փորձարարական ուսուցման շնորհիվ հաստատվել է մեր առաջադրած գիտական վարկածի հավաստիությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լեզվակրթության բնագավառում համացանցային ռեսուրսների օգտագործման կարևոր նախապայման է ուսուցման գործընթացում մեդիամշակույթի և մեդիագրագիտության ներառման տեխնոլոգիան: Մասնավորապես կարևոր դերակատարում ունի տարաբնույթ մասնագիտական տեքստերից, տվյալ դեպքում՝ իրավագիտական ուղղվածության տեքստերից, անհրաժեշտ տեղեկությունների ստացման սովորողների ունակությունը:

2. Բացահայտվել է մեդիատեխնոլոգիաների դիդակտիկական ներուժը օտար լեզվի դասընթացում, և հիմնավորվել են այն առավելությունները, որոնք բերում է թվայնացումը՝ ի նպաստ իրավագիտական ֆակուլտետի ուսանողների լեզվական կարողությունների և մեդիագրագիտության ձևավորման արդյունավետության: Այն ներառում է մեդիակրթության հիմնախնդրին առնչվող զանգվածային լրատվամիջոցներից և կայքերից օգտվելու կարողություն, մասնավորապես՝ պահանջվող իրավագիտական բնույթի տեղեկատվության գրագետ և կոմպետենտ որոնում, մեդիագրագիտության դասընթացների վարում, ռազմավարության և վարժությունների համակարգերի մշակում՝ հաշվի առնելով նոր մանկավարժական պայմաններում տվյալ մասնագիտական ոլորտի առանձնահատկությունները:

3. Հիմնվելով անձնակենտրոն, գործունեական, կոմպետենտային և միջմշակութային մոտեցումների, ինչպես նաև ուսումնական գործընթացի տեղեկատվայնացման և մեդիականացման վրա՝ տեսականորեն հիմնավորվել և փորձարկմամբ ստուգվել է իրավագիտության ֆակուլտետների ուսանողների մեդիագրագրագիտության և մեդիակոմպետենտության ձևավորման նպատակով մշակված մեթոդական համակարգը՝ մասնագիտական տեքստերի ընթերցանության կարողությունների իրագործման տեսանկյունից:

4. Բացահայտվել է այն դրույթը, որ մեդիատեքստերի առանձնահատկությունները (կոդավորվածություն, միջնորդավորվածություն, զանգվածայնություն, հիպերտեքստայնություն) վճռորոշ գործոն են, որոնք նպաստում են ուսումնական

1. Առաքելյան Մ., Մեդիակրթություն և մեդիագրագիտություն // Մանկավարժական միտք, N 1-2, «Զանգակ», Երևան, 2017, էջ 58-63:
2. Առաքելյան Մ., Մուլտիմեդիական միջոցների օգտագործման առկա վիճակը իրավագիտական կողմնորոշմամբ դասընթացներում // Մխիթար Գոշ, N 2, Երևան, 2017, էջ 100-106:
3. Առաքելյան Մ., Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների դիդակտիկական ներուժը // ՎՊՀ Գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Երևան, 2017, էջ 247-253:
4. Առաքելյան Մ., Ընթերցանության ուսուցման առանձնահատկությունները մեդիակրթության համատեքստում // Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում, N 9, ԵՊՀ, «Լուսակն», Երևան, 2018, էջ 200-207:
5. Առաքելյան Մ., Գործընթացների կառավարման առանձնահատկությունները մեդիակրթության համատեքստում // Այլընտրանք, N 2, Երևան, 2019, էջ 68-75:
6. Առաքելյան Մ., Ուսանողների մեդիակոմպետենտության գնահատման խնդիրը իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում // Գիտական Արցախ, N 1(2), ԱԵԳՄՄ, Երևան, 2019, էջ 270-277:

նյութի յուրացման արդյունավետությանը, քանի որ տեքստին զուգահեռ ներառում են նաև ձայն (նաև երաժշտություն), գրաֆիկա, շարժապատկեր:

5.Առաջարկվել է մեդիակոմպետենցիայի ձևավորման միջոցով իրավագիտական կողմնորոշման անգլերենի դասընթացում նոր հնարներով և տեխնոլոգիաներով ընթերցանության կարողությունների զարգացման մեթոդական համակարգ՝ ուղղված ընթերցանության բաղադրիչների յուրացմանը, ինչպես նաև մեդիագրագիտության և մասնագիտական մեդիատեքստերից ինքնուրույն կերպով տեղեկություններ քաղելու հմտությունների զարգացմանը:

6.Առաջարկված մեթոդական համակարգը նպաստում է սովորողների ոչ միայն մեդիագրագիտության և մեդիակոմպետենտության, այլն նաև լեզվահաղորդակցական և միջմշակութային կարողությունների զարգացմանը:

7.Գործնականում կիրառվել է առաջարկված մեթոդական համակարգը, հաստատվել է վարկածի հավաստիությունը:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ատենախոսի հետևյալ գիտական հրապարակումներում.

АРАКЕЛЯН МАРИАМ ЖИРАЙРОВНА

ФОРМИРОВАНИЕ МЕДИАКОМПЕТЕНЦИИ В УЧЕБНЫХ КУРСАХ ЮРИДИЧЕСКОГО АНГЛИЙСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - «Методика преподавания и обучение» (английский язык). Защита диссертации состоится 15 апреля, 2021г., в 12^{00} часов, на заседании специализированного совета «Педагогика» 020 ВАК РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна
Адрес: 0010, Ереван, ул. Тиграна Меца, 17

РЕЗЮМЕ

Актуальность исследования

На современном этапе развития СМИ, в условиях бесконечного потока информации, стали неизбежны такие процессы как глобализация, междисциплинарная интеграция, и информатизация науки. Это, в свою очередь, в качестве первоочередной ставит задачу овладения новыми формами грамотности, такими как медиа, информационная, компьютерная и интернет грамотность. В основе перечисленных форм грамотности лежит многогранная и разнообразная медиакомпетенция, которая позволяет ориентироваться в медиапространстве, понимать язык массовой информации, определять потребность в информации, осуществлять эффективный поиск и отбор необходимой информации, избегая при этом негативного влияния мультимедийных технологий. Актуальность исследования обусловлена новыми вызовами профессинально-ориентированного образования и недостаточным количеством исследований в отечественной литературе в данной области.

Целью исследования является формирование медиакомпетенции студентов юридических факультетов вузов и развитие у них навыков чтения медиатекстов юридического профиля на английском языке.

Задачи исследования

- анализ состояния использования мультимедийных технологий в учебных курсах юридического английского языка, определение уровня материально-технического обеспечения вузов.
- определение уровня владения студентами медиакомпетенцией.
- установление уровня владения студентами языковой компетенцией, с опорой на критерии Европейской системы владения языками (CEFR).

- выявление трудностей владения медиакомпетенцией в процессе обучения чтению юридических текстов на английском языке.
- разработка стратегий, направленных на формирование медиакомпетенции с учетом эффективных видов чтения медиатекстов на английском языке.
- апробация разработанной методической системы на базе юридического факультета Образовательного комплекса полиции РА.

Научная новизна исследования

- Разработана теоретически обоснованная и практически апробированная методическая система развития навыков чтения студентов в рамках формирования медиакомпетенции в учебных курсах юридического английского языка.
- Разработаны и апробированы диагностические тесты для определения уровня сформированности медиакомпетентности студентов в системе занятий по английскому языку. Тесты разработаны с учетом международных критериев, а также специфики национальной аудитории.
- Рекомендованы стратегии эффективного внедрения медиатехнологий на занятиях иностранного практического английского языка.

Теоретическая значимость исследования

Методическая модель, стратегии, система упражнений, тесты, разработанные в результате исследования, могут дополнить систему преподавания профессионально-ориентированного иностранного языка посредством медиатехнологий.

Практическая значимость исследования

Результаты исследования могут быть внедрены в учебных курсах юридического английского языка и в курсах другого профиля при условии адаптации контента упражнений, а также при разработке новых учебных материалов и пособий.

Структура и объем исследования

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения. Она содержит 12 таблиц, 41 диаграмму, 5 графических изображений и 17 рисунков. Общий объем работы составляет 133 компьютерные страницы. Основные результаты исследования опубликованы в 6 научных статьях.

MARIAM ARAKELYAN

DEVELOPING MEDIA COMPETENCY IN THE COURSE OF ENGLISH FOR LEGAL PURPOSES

Thesis submitted for the degree of Candidate of Pedagogical Sciences, specialty 13.00.02 "Teaching and Education Methodology" (English).
The defence of the thesis will be held at SCC of RA 020 degree-awarding scientific council's session at Khachatur Abovian Armenian State Pedagogical University on 15 April, 2021, at 12^{00}.
Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets ave.

SUMMARY

The relevance of the research.

The integration of media and technology in all the spheres of social life is challenging the foundations of education. The key outcome of today's education is becoming the development of an appropriate skill set in order to search, analyze and evaluate the acquired information.

The present research takes into focus the development of reading skills in the course of English for legal purposes through the formation of media competency. The relevance of the research underlies the scope and importance of the problem and the lack of prior studies in the field.

The aim of the research is the parallel development of students' media competency and reading skills in the course of English for legal purposes.

The problems of the research are as follows:

- estimating the rate of media technology usage in the course of English for legal purposes in higher educational establishments and defining the level of student's media competency,
- defining the level of students' reading skills based on the internationally accepted standards of the CEFR,
- defining the main difficulties of media competency formation in the course of English for legal purposes,
- elaborating strategies of media competency formation aimed at the development of reading skills,
- evaluating the methodological system and revealing the efficiency and drawback.

The scientific novelty of the research.

- A new methodological system of developing reading skills through media competency has been elaborated and tested in practice.

- Diagnostic tests for media competency level identification have been elaborated taking into consideration both the internationally accepted criteria and the specificities of national audience.
- A package of tasks and strategies of teaching reading through media technology has been created.

The theoretical value of the research.

The results of the research may contribute to the further development of foreign language teaching methodology in higher educational establishments.

The practical value of the research.

The results of the research may be applied in the following spheres:

- course of English for legal purposes in higher educational establishments,
- course of English for professional purposes, adjusting the content of tasks to the required field of specialty,
- elaboration of manuals, teaching materials and guidelines,
- continual professional development and teacher training courses.

Structure and volume of the thesis.

The thesis consists of Introduction, three chapters, Conclusion, Bibliography and Appendix. It contains 12 tables, 41 diagrams, 5 charts and 17 images. The overall volume of the thesis is 133 computer pages. The main results of the research have been published in 6 scientific articles.